

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՆԱ-ԳՀԾՁԲ-23/06-1**

ք. Երևան

«11» հունվարի 2023 թ.

Հանրապետության նախագահի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի տեղակալ Լս. Պողոսյանի, որը գործում է Հանրապետության նախագահի աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էլ Թի Մոտորս» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Լ. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:



3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1,500,000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30 ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V_9 = U_9 / N_9 \times D_9 \times E$, որտեղ՝

V_9 -ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է:

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է:

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²⁾ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

²⁾ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերագել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 27 էջից, կնքվում է երկու օրինակից. որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Հանրապետության նախագահի աշխատակազմ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011204089
ՀՎՀՀ 00006505



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Էլ Թի Մոտորս» ՍՊԸ
ք.Երևան, Մարգարյան 29/3
«Ամերիաբանկ» ԲԲԸ
ՀՀ1570065411040100
ՀՎՀՀ 01301624



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ ՊԻ

| Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական ընտրագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր բաժնավիճակ | մատուցման | |
|--------------------------------------|---|--|----------------|------------------------|----------------------|---|---|
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 5011130/501 | Տոյոտա Քենդի 2.4 (2008թ.) TOYOTA CAMRY ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | դրամ | 600,000 | 1 | Ք. Երևան, Կատարողի տեխնիկական սպասարկման կայանում | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարում պայմանն ուժի մեջ մտնելու օրվան հաշված 21-րդ օրացուցային օրվան մինչև 2023 թվականի դեկտեմբեր 25-ը: |
| 3 | 5011130/503 | Տոյոտա Կորոլա (2008-2013թ.) TOYOTA COROLLA ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | դրամ | 900,000 | 1 | | |

* Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել փնել, քան օրվալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, պլանավորման ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկի իրականացնելով ֆինանսա միջոցներ նախադրվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ

Հանրապետության նախագահի աշխատակազմ




Ք. Երևան, Մարշալ Բաղդասյանի պող. 29/3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011204
Հ/Հ ՀՀ 00006

Signature

Այլ ԹԻ Մոտորս

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Էլ Թի Մոտորս» ՍՊԸ
Ք. Երևան, Մարգարյան 29/3
«Աներիարանկ» ԲԲԸ
ՀՀ 15700065411040100
Հ/Հ ՀՀ 01301624



Signature

ԳՆԱՑՈՒՑԱԿ

| Հ/Հ | Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները | Տրանսպորտային միջոցների մակնիշները/տեսակները/ և նույնացման համարները՝ ըստ չափաբաժինների | |
|--|--|---|--|
| | | 1-ին չափաբաժին | 3-րդ չափաբաժին |
| | | Տոյոտա Քեմրի 2.4 (2008թ.) TOYOTA CAMRY | Տոյոտա Կորոլա (2008-2013թ.) TOYOTA COROLLA |
| | | JTNBE40K703185855 JTNBE40K703155948 | JTNBM58E903504521 JTNBH58EX0J008577 NMTBB4JE20R030942 JTNBV58E80J201870 |
| 1 | 2 | 3 | 4 |
| Մեկ միավորի համար նախատեսված առավելագույն գներ - գնացուցակ /ՀՀ դրամ/ | | | |
| | 1. Շարժիչ | | |
| 1 | Շարժիչի հանում և տեղադրում | 28816 | 24360 |
| 2 | Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները | 90000 | 75000 |
| 3 | Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով | 23053 | 19488 |
| 4 | Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով | 17290 | 14616 |
| 5 | Շարժիչի գլխիկի փականի փոխարինում հղկումով և խտաբուկերով | 3750 | 3750 |
| 6 | Վառոցքի մոմի բնիկի նորոգում | 1729 | 1462 |
| 7 | Շարժիչի փականների զսպանակների փոխարինում | 1729 | 1462 |
| 8 | Փականների խցուկնի փոխարինում | 1729 | 1462 |
| 9 | Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1կ-տ | 1729 | 1462 |
| 10 | Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում | 37500 | 37500 |
| 11 | Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում | 25934 | 21924 |
| 12 | Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում | 5763 | 4872 |
| 13 | Ծնկաձև լիսեռի ուղղում | 6000 | 6000 |
| 14 | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում | 8645 | 9744 |
| 15 | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում | 8645 | 9744 |
| 16 | Շարժիչի գլանի փոխարինում (гилзовка) | 14408 | 12180 |
| 17 | Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում | 5763 | 4872 |
| 18 | Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում | 8645 | 7308 |
| 19 | Փոկանիվի փոխարինում | 3750 | 3750 |
| 20 | Շարժիչի շղթայի փոխարինում | 18750 | 18750 |

| | | | |
|--|--|-------|-------|
| 21 | Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում) | 7500 | 7500 |
| 22 | Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով | 5250 | 5250 |
| 23 | Շարժիչի յուղի մղիչի փոխարինում | 3458 | 2924 |
| 24 | Շարժիչի յուղի մղիչի մաքրում | 576 | 488 |
| 25 | Շարժիչի յուղի ռադիատորի փողրակի փոխարինում | 6916 | 7308 |
| 26 | Յուղի ծորակի փոխարինում | 1153 | 974 |
| 27 | Օդաքաշակ փողրակի փոխարինում | 2306 | 1949 |
| 28 | Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում | 2625 | 2625 |
| 29 | Շարժիչի կափույրի փոխարինում | 9000 | 9000 |
| 30 | Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում | 9000 | 9000 |
| 31 | Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ | 8069 | 8039 |
| 32 | Ատամնանիվի փոխարինում | 576 | 488 |
| 33 | Սուխարիկ փոխարինում 1կ/տ | 576 | 488 |
| 34 | Շարժիչի հանդարտիչի փոխարինում | 9000 | 9000 |
| 35 | Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում | 8645 | 8282 |
| 36 | Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում | 6916 | 7308 |
| 37 | Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով | 9221 | 9744 |
| 38 | Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում | 7500 | 7500 |
| 39 | Գլխիկի հեղույսի փոխարինում | 375 | 375 |
| 40 | Ծնկաձև լիսեռի հեղույսի փոխարինում | 750 | 750 |
| 41 | Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում | 14408 | 13154 |
| 42 | Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում | 9000 | 9000 |
| 43 | Շարժիչի քիմիական լվացում 1 կտորը | 1875 | 1875 |
| 44 | Կափույրի բնիկի նորոգում /գնեզդո/ | 1125 | 1125 |
| 2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ | | | |
| 45 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 750 | 750 |
| 46 | Ավտոմեքենայի հանգույցների յուղում | | 750 |
| 47 | Համակարգչային ախտորոշում | 3000 | 3000 |
| 48 | Յուղի ռադիատորի փոխարինում | 3750 | 3750 |
| 49 | Յուղի ռադիատորի նորոգում | 750 | 750 |
| 50 | Շարժիչի կոլեկտորի փոխարինում | 3750 | 3750 |
| 51 | Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում | 3750 | 3750 |
| 52 | Վառոցքի մոմի փոխարինում 1 հատ | 375 | 375 |
| 53 | Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում | 5250 | 5250 |
| 54 | Օդի զտիչի փոխարինում | 225 | 225 |
| 55 | Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 900 | 900 |
| 56 | Օդի ծախսաչափիչի ռետինե խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 563 | 563 |

| | | | |
|--|---|-------|-------|
| 57 | Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում | 750 | 750 |
| 58 | Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում | 3750 | 3750 |
| 59 | Ինժեկտորի բոցամուղերի մաքրում | 7500 | 7500 |
| 60 | Բոցամուղի կողավորում | 750 | 750 |
| 61 | Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում | 750 | 750 |
| 62 | Բենզամղիչի փոխարինում | 3750 | 3750 |
| 63 | Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 1125 | 1125 |
| 64 | Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | 3750 | 3750 |
| 65 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | 7500 | 7500 |
| 66 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում | 5250 | 5250 |
| 67 | Վառելիքի բաքի մաքրում | 1500 | 1500 |
| 68 | Օդի ծախսի տվիչի փոխարինում | 3750 | 3750 |
| 69 | Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում | 3000 | 3000 |
| 70 | Ջրի խողովակի, փողրակի փոխարինում | 750 | 750 |
| 71 | Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում | 375 | 375 |
| 72 | Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի մաքրում | 75 | 75 |
| 73 | Յուղի ճնշման տվիչի փոխարինում | 750 | 750 |
| 74 | Տվիչի փոխարինում | 750 | 750 |
| 75 | Ակսիլատորի փոխարինում կամ նորոգում | 2250 | 2250 |
| 76 | Օդազտիչի իրանի փոխարինում | 1125 | 1125 |
| 77 | Էլ.բենզոմղիչի կախոցի փոխարինում | 750 | 750 |
| 3. Սառեցման և արտաժման համակարգ | | | |
| 78 | Հովհարի փոխարինում | 2250 | 2250 |
| 79 | Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | 750 | 750 |
| 80 | Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում | 5250 | 5250 |
| 81 | Ռադիատորի նորոգում | 18750 | 18750 |
| 82 | Ընդարձակող բաքի փոխարինում | 750 | 750 |
| 83 | Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում | 750 | 750 |
| 84 | Ջրի ծորակի փոխարինում | 2250 | 2250 |
| 85 | Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում | 750 | 750 |
| 86 | Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 2250 | 2250 |
| 87 | Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված | 18750 | 18750 |
| 88 | Վառարանի ռադիատորի նորոգում | 2250 | 2250 |
| 89 | Վառարանի շարժիչի փոխարինում | 5250 | 5250 |
| 90 | Ջեռուցիչի էլ.ծորակի փոխարինում | 2250 | 2250 |
| 91 | Ջեռուցիչի իրանի փոխարինում | 2250 | 2250 |
| 92 | Թերմոստատի փոխարինում | 3000 | 3000 |

| | | | |
|--------------------------|---|-------|--------|
| 93 | Ջրի մղիչի փոխարինում միջադիրով | 5625 | 5625 |
| 94 | Ջրի մղիչի միջադիրի փոխարինում | 5625 | 5625 |
| 95 | Գեներատորի փոկի փոխարինում | 1125 | 1125 |
| 96 | Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում | 2250 | 2250 |
| 97 | Ջրի ռադիատորի վերանորոգում | 18750 | 18750 |
| 98 | Թերմոստատի միջադիրի փոխարինում | 3000 | 3000 |
| 99 | Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում | 2250 | 2250 |
| 100 | Խլարարի անուրի (xамыр) փոխարինում | 750 | 750 |
| 101 | Խլարարի ներդիրի փոխարինում | 2250 | 2250 |
| 102 | Խլարարի կախոցի փոխարինում | 2250 | 2250 |
| 103 | Հովացման հեղուկի փոխարինում | 1875 | 1875 |
| 104 | Դիֆուզորի փոխարինում | 3750 | 3750 |
| 105 | Կոնդիցիոների լիցքավորում | 3000 | 3000 |
| 106 | Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում | 9000 | 9000 |
| 107 | Կոնդիցիոների ռադիատորի փողրակի հանում և տեղադրում | 3375 | 3375 |
| 108 | Կոնդիցիոների առանցքակալի հանում և տեղադրում | 3375 | 3375 |
| 109 | Կոնդիցիոների ռադիատորի հանում և տեղադրում | 9375 | 9375 |
| 110 | Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում | 4875 | 4875 |
| 4. Փոխանցման տուփ | | | |
| 111 | Փոխանցման տուփի յուղի զտիչի փոխարինում | 7500 | 7500 |
| 112 | Փոխանցման տուփի յուղի փոխարինում | 7500 | 7500 |
| 5. Բաշխիչ տուփ | | | |
| 113 | Բաշխիչ տուփի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները | | 112500 |
| 114 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում | | 30000 |
| 115 | Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում | | 37500 |
| 116 | Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում | | 22500 |
| 117 | Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում | | 22500 |
| 118 | Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում | | 16500 |
| 119 | Բաշխիչ տուփի շարժաբերի փոխարինում | | 16500 |
| 120 | Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում | | 16500 |
| 121 | Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում | | 11250 |
| 122 | Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում | | 11250 |
| 123 | Բաշխիչ տուփի երկժանիի փոխարինում | | 11250 |
| 124 | Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում | | 11250 |
| 125 | Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում | | 11250 |

| | | | |
|----------------------------|--|-------|-------|
| 153 | Առջևի զսպանակի փոխարինում | 7500 | 7500 |
| 154 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 4500 | 4500 |
| 155 | Հարվածամեղմիչի վռանների փոխարինում | 4500 | 4500 |
| 156 | Մեղմիչի ամրացման կալունակի փոխարինում | 4500 | 4500 |
| 157 | Մեղմիչի երկաթե համաձուլվածքով վռանի փոխարինում | 4500 | 4500 |
| 158 | Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 3750 | 3750 |
| 159 | Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ | 3750 | 3750 |
| 160 | Ներքևի լծակի հեղույսի փոխարինում | 1500 | 1500 |
| 161 | Հարվածիչի (բարձիկի) փոխարինում | 5250 | 5250 |
| 162 | Գնդե հողակապերի պատյանի փոխարինում | 3000 | 3000 |
| 163 | Գնդե հողակապերի փոխարինում | 3750 | 3750 |
| 164 | Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում | 3750 | 3750 |
| 165 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | 3750 | 3750 |
| 166 | Հետևի կախցի անվաքացքի կարգավորում | 4500 | 4500 |
| 167 | Հետևի կայունարարի վռանների փոխարինում | 2250 | 2250 |
| 168 | Կայունարարի կալունակի փոխարինում | 2250 | 2250 |
| 169 | Հետևի զսպանակների փոխարինում | 7500 | 7500 |
| 170 | Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում | 5625 | 5625 |
| 171 | Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 2250 | 2250 |
| 172 | Հետևի ցնցամեղմիչի փոխարինում | 4500 | 4500 |
| 173 | Անկյունագծային լծակի վռանների փոխարինում 1հատ | 2625 | 2625 |
| 174 | Անվակունդի դարձովի կանգնակի փոխարինում | 4500 | 4500 |
| 175 | Աջ կամ ձախ դարձկեն լծակի փոխարինում | 4899 | 4899 |
| 8. Ղեկային մեխանիզմ | | | |
| 176 | Ղեկասյունակի հիմնական նորոգում, | 37500 | 37500 |
| 177 | Ղեկային կալունի ձգանների փոխարինում | 5763 | 4872 |
| 178 | Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում | 2882 | 2436 |
| 179 | ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում | 5625 | 5625 |
| 180 | Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում | 4610 | 3898 |
| 181 | Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները | 12000 | 12000 |
| 182 | Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | 4322 | 3654 |
| 183 | Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում | 8069 | 6821 |
| 184 | Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում | 8069 | 6821 |

| | | | |
|--------------------------------|--|-------|-------|
| 185 | Ղեկային ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում | 4500 | 4500 |
| 186 | Ղեկային ձողի գնդե հողակապի նորոգում | 3000 | 3000 |
| 187 | Ղեկային ձգաձողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում | 5763 | 4872 |
| 188 | Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում | 1875 | 1875 |
| 189 | Ղեկային ձգաձողի ծայրակալների փոխարինում | 2625 | 2625 |
| 190 | Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում | 3750 | 3750 |
| 191 | ՂԿ ձողի տեղաշարժի մեխանիզմի փոխարինում | 3750 | 3750 |
| 192 | Հիդրոուժեղարարի յուղի տարայի փոխարինում | 1500 | 1500 |
| 9. Արգելակային համակարգ | | | |
| 193 | Վակումային ուժեղարարի փոխարինում | 15000 | 15000 |
| 194 | Վակումային ուժեղարարի փականի փոխարինում | 3750 | 3750 |
| 195 | Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում | 7500 | 7500 |
| 196 | Գլխ. գլանի հիմնական նորոգում, բոլոր աշխատանքների ընդգրկումով | 7493 | 6334 |
| 197 | Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում | 6916 | 5846 |
| 198 | Աշխատանքային գլանի հիմնական նորոգում, | 4610 | 3898 |
| 199 | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում | 3000 | 3000 |
| 200 | Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում | 3000 | 3000 |
| 201 | Առջևի սուպպորտի վերանորոգում | 3750 | 3750 |
| 202 | Հետևի սուպպորտի վերանորոգում | 3750 | 3750 |
| 203 | Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում | 5625 | 5625 |
| 204 | Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում | 7500 | 7500 |
| 205 | Արգելակային փողրակի փոխարինում | 5763 | 4872 |
| 206 | Արգելակային կոճղակների փոխարինում | 2250 | 2250 |
| 207 | Արգելակային համակարգի օդահանում | 2250 | 2250 |
| 208 | Թմբուկային կոճղակների փոխարինում | 3375 | 3375 |
| 209 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | 3000 | 3000 |
| 210 | Առջևի արգելակային սկավառակների հղկում 1 հատ | 3000 | 3000 |
